

յայտ արասցէ՝ եթե որչափ են Միքայի նորա²⁷ կատարեալք առաջին աւրինացն. յայնմիկ՝ զի ասէ Միքայ ևս պիտոյ է քեզ, զի ցուցցէ՝ եթե ոչ է ՚ի զուր և ՚ի²⁸ տարապարտ գալուստ նորա: Եւ դարձեալ թերութիւն լիութեանն ոչ է աւտար. զի եթե ստեաց փարիսեցիին յայնմիկ զի ասաց՝ թե արարեալ է իմ, ո՞ր արդեւոր զնա ստել և ասել՝ թե և զայս ևս առնեմ. զի սուտ մարդ ոչ ինչ երկնչի ՚ի²⁹ ստել: Այլ զի մի ամաչեսցէ նա յասել անդ իւրում՝ եթե արարեալ է իմ գայս, ո՞չ ամաչէր նա յայնցանէ՝ որք զիտեին զնա թե ոչ արար:

7. Եւ երկու՝ զի տրամեցաւ նա, և արդարեւ ճշմարիտ տրամեցաւ նա, յայնմանէ՝ զի ետես տէր³⁰ եթե տրամեցաւ նա. զի եթե էր ստեալ նորա, ոչ տրամէր նա, զի և ոչ առնել պատրաստեալ լինէր նա. այլ իբրև այր մի՝ որ կարծէր եթե կատարեալ իցէ նա, եկն ցուցանել ՚յայտ առնել³¹ զգովեստն իւր. այլ իբրև ետես նա՝ թե թերի է, տրամեցաւ նա³². զի ետես զի մնացին պարծանքն նորա. զի արդարութիւն նորա ըստ պարծանաց աւրինաց գործեալ էր նորա, և առեալ էր³³ զբարութիւնս փոխանակ ընդ նորա: Եւ զի հայեցաւ ընդ նա սիրով, զի ցուցցէ թե որչափ սիրելի են նորա որ ընթանան ՚ի կատարումն: Իբրու պաշտէ սոյն իսկ այս զայն՝ որ ՚ի ներքոյն³⁴ է քան զնա, սակայն նմա որ ՚ի վերոյն է քան զնա՝ անսան: Սիրեաց զնա, զի յայտ արասցէ թե որչափ սիրեցեալ է այն՝ որ ՚ի վերին աշտիճանն ձկտի:

8. Եւ այն՝ զի ասէ վարդապետ բարերար, կաշառովք³⁵ կանխեաց նա: Յառաջագոյն կաշառեաց զտէր մեր. այլ տէր մեր հան³⁶ ընկէց ՚ի բաց զպատճառս

27 սիրելիք նմա — 28 զուր — 29 Om — 30 Add մեր — 31 և յայտ առնել նմա — 32 Om — 33 Om — 34 վերոյն — 35 կաշառաւք — 36 եհատ

2 Luc., XVIII, 22; Marc., x, 21 — 6 Matth., XIX, 20 — 20 Marc., x, 21 — 27 Marc., x, 17

Դաշառանացն, զի ցուցցէ՝³⁷ եթե զարդարն պարտ է ասել և լսել. և զի հայեցաւ³⁸ ընդ նա սիրով, բայց³⁹ թերևս այսուիկ պարտեցի մտցէ նա ՚ի կատարումն՝ որ նովաւ գործեալ լինին. ՚զի արդարեւ առ ինքն⁴⁰: Այլ քանզի արդարութիւն նորա ըստ աւրինացն է⁴¹, զի վասն յուսոց⁴² բարութեանց որ աստէն է՝ գործեին նոքա, յուսացաւ նա ՚ի մեծութիւնն իւր, իբրև զի թե վարձք իցեն այն արդարութեանն նորա: Վասն այսորիկ⁴³ դժուարին է մեծատանցն, ՚ի և որք⁴⁴ յուսացեալ են յայնմիկ, եթե ինչք⁴⁵, ասեն, իւրեանց վարձք հատուցման ՚վաստակոց իւրեանց են⁴⁶. զի ոչ կարեն թողուլ զինչս իւրեանց՝ որք կարծեն թե հատուցումն իցեն փոխանակ ընդ արդարութեան իւրեանց: ⁴⁷ Զի մի ասիցէ՝ եթե զառաջինն ցասմամբ իսկ⁴⁸ ել ընդ առաջ իմ, և վասն այսորիկ⁴⁹ մերժեաց զիս պատճառանաւք, ասէ. Մի միայն է բարերար. և նա՝ թե այդպէս է՝ ո՞չ է բարերար. զի ահաւանիկ⁵⁰ որդի բարերրի⁵¹ կոչի նա. վասն այսորիկ հայեցաւ ընդ նա սիրով, զի յայտ արասցէ՝ թե նա ինքնին մերժեաց զանձն իւր: Եւ նա է մեծատուն՝ որ զգեցեալն էր զծիրանիս. յայնմանէ՝ զի ասէ Հայր իմ Աբրահամ, և յայնմանէ՝ զի ասէ Անդ են Մովսէս և մարգարէքն, ահաւանիկ⁵² իսրայէլեան էր նա:

9. Զիք, ասէ, բարերար, բայց միայն մի: Եւ զու, տէր, ո՞չ ես բարեր⁵³: Մի միայն է, ասէ, բարերար, Հայր՝ որ յերկինս է: Եւ գալուստ քո ո՞չ ահա բարեբարութեան է: Այլ ես, ասէ, ոչ ՚իմ եկեալ⁵⁴ յանձնէ

37 կաշառանացն, զի ցուցցէ նմա — 38 Add նա — 39 բայ — 40 զոր աւրինակ և առաջինքն — 41 Om — 42 յուսոյ — 43 Add և — 44 ոյք — 45 ինչ — 46 են վաստակոց իւրեանց — 47 Add և — 48 Om — 49 այսորիկ — 50 ահաւանիկ — 51 Lege բարերարի B — 52 ահաւանիկ — 53 Lege բարերար B — 54 եկեալ եմ

2 Marc., x, 21 — 9 Marc., x, 23 s. — 16 Matth., XIX, 17 — 19 Luc., XVI, 19 — 21 Luc., XVI, 24 — 21 Luc., XVI, 29 — 23 Marc., x, 18 — 24 Matth., XIX, 17; Marc., x, 18 — 26 Joh., VII, 28